

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 փրակ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿԻ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԱՎԱՐՈՒՄ
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ընդունիր եւ յարմար դատաւար-
ներ չիւն իր հրատարակութեան անդա-
ջովի կամ մասնաւոր:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ անդի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ԲԱՆ ՍԸ ԿԱՅ ԹԵՐԹԻՆ ՍԷՋ

Ամէն անգամ որ լրագիրը հրա-
պարակ կուգայ, հետաքրքիրնե-
րու խումբ մը կը նային ձեռքէ
ձեռք կը պտտոցնէ զայն: Մէկ է-
ջէն միւսը ակնարկներ կը թուշտին,
խուզարկու հետազոտութեամբ:

Մէկ ալ տեսնես անկիւն մը նե-
տուած է, կամ մէկու մը գրպանը
մտած թերթը՝ որուն մէջ կարծես
բոլորովին տարբեր, բոլորովին
չահեկան տողեր կը փնտռէ մեր հա-
սարակութեան մեծագոյն մասը:

— Բան մը կա՞յ, կը հար-
ցնէ մէկը միւսին: Եւ պատաս-
խանը սովորաբար ժխտական կըլ-
լայ:

— Բան մը կա՞յ: Խորհրդաւոր
հարցում մըն է աս ուր ամբողջ
նկարագիր մը պահուցած է. ցա-
ւալի, հիւանդոտ պահասութիւն մը
որմէ վարակուած են խիստ շա-
տեր:

Դիւր թերթիդ մէջ, եթէ կու-
ղես, զուտ ազգային, ներքին կըր-
թիչ, գրական ու բարոյական ու-
սումնասիրութիւն մը որուն մէջ
ցոյց տրուած ըլլայ, որոշ ու իրա-
կան գծերով ժողովուրդին հոգե-
կան մէկ փտութիւնը և կամ անոր
օրինակելի մէկ ազնուութիւնը:
Աշխատէ՛, որքան կրնաս, նոր
կարծիք մը, խորհրդածութեան
արժանի նոր միտք մը, նոր գա-
ղափար մը դնել անձուկ էջերէդ
մէկուն մէջ, սպասէ որ ընթերցող
հասարակութիւնը որոճալըսածիդ
վրայ, ընդունի կամ մերժէ բու-
մէկ առաջարկութիւնդ՝ ճշմարիտ
գիտակցութեամբ և ինքնուրոյն
վճռականութեամբ:

Ո՛չ, դառն հիասթափում մը
պիտի ունենաս, տեսնելով դժ-
բաղդաբար որ մեր երիտասարդու-
թեան մեծ մասին մեջ մեռած է
այն հետաքրքրութիւնը, այն կեն-
դանի, առողջ ոգին որով պիտի
փափաքէր հանրային լուրջ խըն-
դիրներով զբաղել և իր ընկերա-
կան պարտականութեանց բաժինը
բերել, դնել օգտակար գործ մը
ի գլուխ հանելու աշխատութեան
մէջ:

Բան մը կա՞յ, կը հարցնէ նո-
րէն մէկը, և իր ձեռքը կերկնցնէ
թերթը առնելու մտքով:

— Ձգէ սըվի, կը պատասխանէ
միւսը. շան բարոյներ են, բան
մը չիկայ մէջը: Եւ դէմքը կը
ծամածուկէ հին, քաղցեացի իմաս-
տունի մը ծանրախոհ լրջութիւնը
ցոյց տալ փորձելով: Այո՛, բան
մը չի կենար թերթիդ մէջ, երբ
մասնաւորներու աղտոտ կրքերուն
արձագանքը չես եղած: Քաղա-
քական բանի մը ոչ ինչ բանագո-
ղութիւններ, ահա ասոնք են մի-
այն, որ օրուան խնդրի քողին տակ
դեռ կը չլացնեն միամիտ ամբօրի
կարեւոր մէկ մասը:

Իսկ անդին, շատերը, նոյն իսկ
խելացի կարծաւորները, թերթին
մէջ կը փնտռեն միմիայն ընկեր
ընկերի դէմ հիւսուած զրպարտու-
թիւններ, հրապարակի վրայ գը-
լորուած շահագրգիռական փոքրոգի
գձուռ մեղադրանքներ, հայհոյու-
թիւններով չպարուած նախատա-
կան, անամէջ ակնարկութիւններ:

Շարագրէ, եթէ կրնաս, անձի
մը դէմ անխիղճ յարձակողական
մը. հոգ չէ թէ անպարկեշտ, սուտ
ու տխմար բառերու կոյտ մը եւ
զած ըլլայ զրածո, փաստէ գա-
ղափարէ, տրամաբանութենէ զուրկ
խառնակութեան զլուխ գործոց
մը, պիտի տեսնես որ յօգուածիդ
առաջ բերած տպաւորութիւնը ա-
կընկալածէդ շատ աւելի սաստիկ
է և շատ խորունկ:

Իրարանցումը ընդհանուր է:
Փոխանակ զգուանքի, փոխանակ
արհամարհանքի, ամենուն շըր-
թունքէն ժպիտ մը կը տեսնես
կախուած, չարաճճի զուարթ ժը-
պիտ մը զոր կարելի է զոհունա-
կութեան նշան համարել: Ա՛լ ա-
մենքին բերանը մէկ հարցում մը
միայն կայ:

— Կարգացի՛ր լրագիրը
— Ի՞նչ կայ, նոր բա՞ն մը հրա-
տարակուած է:

— Կարգա՛ գուն, պիտի տեսնես
շախախտիչ բան է... ա՛, գորս
դու պարտաւորեցիր:

Ինչքան ալ ցաւալի ըլլայ, պէտք
է խոստովանել որ մեր մէջ իրա-
կան երեւոյթ մըն է դարձած մը:

տածելու, հետաքրքրուելու այս
կերպը որ մեր պղտիկութեան ճըշ-
մարիտ յայտարարն է սակայն ժո-
ղովուդ մը որ վերին աստիճանի
գիւրահաւան է եւ որ լուրջ փաս-
տերէ աւելի բիրտ ու անկապ բա-
ռերով կը շնայուէր կը հետաքրք-
րուի, ցոյց կուտայ թէ հեռու է
դեռ եւս այն արդարակորով ողջ-
մտութենէն որուն առջեւ իրողու-
թեանց ցրտացումը, գաղափարնե-
րու յստակ արտայայտութիւնը մի-
այն կշիռ ունի:

Հասարակութիւն մը որ զուրկ է
այս ողջմտութենէն, ամենեւին չի
բարկանար, չի գրգռուիր եթէ իր
մէջ եւ իր անունով անպատիժ ի
գործ դրուին այն ամէն անխղ-
ճութիւնները զոր կրնայ երեւա-
կայութիւնը հնարել:

Հանրային բարոյականի անա-
ղարտ պահպանումին նախանձա-
խնդիր ժողովուրդ մը խստապա-
հանջ կըլլայ ամէն բանի մէջ եւ
կը պահանջէ որ իր մտքին ու սըր-
տին առաջնորդները հայհոյանքի
տեղ գրական փաստ՝ եւ սոփես-
տութեան տեղ ազնիւ գաղափար
միայն գործածեն:

Մարդ մը կրնայ խիստ ըլլալ,
անողոր ըլլալ երբ խնդիրը ճըշ-
մարտութեան մը շահերը պաշտ-
պանելու եւ կեղտոտութիւն մը եւ
բեւան հանելու վրայ է:

Մինչեւ իսկ մասուլին պարտա-
կանութիւնն է հրապարակային
մերկացումներով, անխնայ հար-
ուածներով պատուել այն քողը
որուն ետեւ պահուած կան ընկե-
րային, ընտանեկան եւ հասարա-
կական աղտոտ բարքեր ու դէմ-
քեր: Միայն թէ ազնիւ մնալու է,
եւ ամենեւին զրպարտելու չէ, եթէ
նոյն իսկ իր դէմ գտնուողը իր
ամենատիրոջ թշնամին ըլլայ:

Անխորժ ճշմարտութիւնները՝
շողորդող ստույգութիւններէն հա-
ղար անգամ աւելի նախապատուե-
լի են: Հետեւաբար փաղաքական
ոճ մը չէ որ փնտռել պարտինք
մեր թերթերուն մէջ. ընդհակա-
ռակը շղուտ տողեր, կծու նախա-
գասութիւններ աւելի ակործելի
կը թուին շատ անգամ, բաւական
է որ փաստ կենայ, տրամաբանու-
թիւն կենայ զրուածքին մէջ:

Դժբաղդաբար մեր շատ մը ըն-
թերցողներուն փնտաւոր աս չէ
տակաւին: Բանի մը թափթփուր
հայհոյութիւններ բաւական են
թերթ մը ձեռքէ ձեռք պտտոցնե-
լու համար:

— Բան մը կա՞յ, երբ կը հար-
ցնեն ուրիշ շատեր ալ, հաւատա-
ցէք որ զրական աղտը կտոր մը
չէ փնտաւորին, ոչ ալ՝ գաղա-
փարական գրուածք մը: Ձէ՛, ա-
նոնց ուղածը տարբեր բան է: Գէշ
ակնարկութիւն մը, անպատշաճ լե-
զու մը մէկէն միւսին դէմ: Ահա
ամենը: Ասոնք այն բարի պտուղ
արարածներն են որոնք ճիւղա-
յին, այլանդակ բնագոյով մը հա-
ճոյք կըզգան՝ տեսնելով որ երկու
ընկերներ կռուի բռնուած են: Ա-
տոնց լղրճուկ, ապականուած հո-
գիւր համար անհրաժեշտ պէտք
մըն է հանդիսատես ըլլալ խառ-
նակութեանց, ստոր մերկայու-
թեանց եւ ահուկի դաւադրու-
թեանց:

Իրենց օրը կորսնցուցած կը հա-
մարին եթէ, առանց ֆլասաբեր
պայքարի մը ականատես դառնու-
լու, անկողին մտնեն: Չզուգնի՛ տի-
պարներ, որոնցմէ զգուշանալ հար-
կաւոր է:

— Բան մը կա՞յ, պէտք է որ
հարցնենք: Սակայն մեր փնտա-
ւոր ըլլալու է իսկապէս այն՝ ու-
րուն պէտք ունինք եւ որ կրնայ
օգտակար ճառագայթում մը ու-
նենալ ժողովուրդի սրտին ու մըտ-
քին վրայ:

Ազնուութիւն, փաստ եւ տրա-
մաբանութիւն. ահա ինչ որ պա-
հանջելու է զրոյներէն ու խօսող-
ներէն:

Հայ ազգը՝ հակառակ իր գըլ-
խուն հասած սոսկալի աղէտնե-
րուն՝ չէ մեռած և չպիտի մեռնի
վասն զի իր մէջ կը պարունակէ
բարոյական այնպիսի յատկութիւն-
ներ որոնք կրնան զինքը վերա-
կենդանացնել: Ամենուս ուշադ-
րութեան առարկան ըլլալու են
այդ ազնիւ յատկութիւնները ու-
րոնք փոխանակ տկարանալու պէտք
է զօրանան և ծաւալին: Ասոր հա-
մար հարկ է որ ամեն բանէ ա-
ռաջ ջնջենք մեր մէջէն հայհոյան-

քի գրութիւնը և ղեկավարութիւնը միայն փաստերէն և իրողութիւններէն, որպէս զի կարող ըլլանք անաչառօրէն պարզել մեր վերքերը և լրջօրէն խորհիլ անոնց դարմանումը:

Յաջողութեամբ համար սակայն անհրաժեշտ պայման է որ նախ հասարակութիւնը գիտնայ արհամարհել ինչ որ սուտ է, զրպարտութիւն է, հակասական ու անտրամաբանական է:

Հանրութիւնը լրջախօհութեան և ճշմարտութեան պէտք է սիրահարի, ո՛չ թէ հայհոյանքի:

Այն ատեն է որ գիտակցութիւնը, ճշմարիտ հետաքրքրութիւնը կարծիքնայ իր ներսերէն: Եւ փաստացի գրութիւններ, օգտակար մտածումներ փնտռելու համար միայն կը հարցնէ ալ եւս.

— Բան մը կա՞յ թերթին մէջ:

նի հոգիին ու սրտին ամենէն մօտիկ բարեկամներուն:

3. «Արժիւարի դէմ դաշոյն հանելու չափ հեռուն գացած» չեմ, վասնզի իմ գոտին ու վարկիս բոլորովին աննպաստ պարագայ մը կըլլար ատիկա. իմ անկեղծ համոզումն էր ու է որ պէտք է ապրի ան, օր մը ճշգրտի ամեն բան, և անատենը Չօպանեանի պէս արփիարեան փողարները, ճպտոտ ու պլլած աչքերնին սրբելով, տեսնեն իրենց հերոսը իր մշտադաւար դափնիներուն մէջ:

Արդ, պարտաւոր կընեմ Չօպանեանը ապացոյցնել իր գրածը թէ ես դաշոյն հանած ըլլամ իր կողմէն դէմ. Եթէ փախուստ տայ ու չուպացուցանէ, իրաւունք կունենամ զինքը կոչիլ ոչ թէ «դրմելի», ալ մարդ մը որ իր գրածը չգիտեր:

Չօպանեանը ինծի անծանօթ մը չէ Արժիւարեանի փողարութեան մէջ. և հակառակ իր գրածին թէ «ոչ մէկ կերպով վերաբերութիւն չունի այդ գործի ինծի հետ», ըսկիզբէն իմ իմ «այդ գործին» մէջ է ոտքով ու գլուխով: Անշուշտ չի կրնար շատերու մօտեցնել տալ թէ ինչ որ չհամարձակեցաւ իր ջրաղիկի մէջ հրատարակել ինծի դէմ իր կողմը պաշտպանելու համար, քարոզից փողարներու և գալոցու կաններու մէջ: Արժիւարեանը կոչելով «Հայոց Մըրիապօն ու Ժիւլի Ֆալլը» — Բարիկը երթալէ յետոյ ալ շտրունակից իր թիւթեւութիւնները. գրեց ինչ որ բնաւ ալ հասկնալիք չունի, կը զբէ ախօր ինչ որ չպիտի հասկնայ երբէք, վասն զի իր կողմէն պաշտպանութիւն մէջ կատարեալ մոլեռանդ մը ու մոլորութեամբ մըն է:

Իսկ եթէ ճիշդ է իր ըսածը թէ ինքը մարգարէներնայ մը չէ, թող իր «օրօր» ներքը շարունակէ և իր բարեկամին հետ որուն փաստաբան

նութիւնն ու փառաբանութիւնը կը ստանձնէ, Հայոց մօտեցնել տան մեր արիւնի քսամնելի յիշատակները: Ասկէ դատ, երբէք օր մըն ալ մաքէս չպիտի անցընեմ թէ ինչո՞ւ Չօպանեան իր ընթերցողներուն քշած զրքոյկներուն ճակատը, օտարներուն արգահատանքը մտալու համար, իր բարեկամ Ֆրանսուայի գրել կուտայ թէ ինքը յաջողի մըն է և Բարիկը աքսորանքի մէջ կուպիլ: Ոչ, չեմ ալ նախանձիր, վասն զի սիրամարդի փնտռելներուն տակ, ազնաւը լաւ կը ճանչնամ:

Հրանդ

ՏԻՊԱՐ ԱՋՆՈՒՌՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայ ժողովուրդ,

Անձիս դէմ յայտնի քսամնելի զըրպարտութեան համար, ինչպէս գիտես, դատ բացած եմ Շարժումի պատասխանատուին՝ Պ. Թահմիզեանի դէմ, որ օրէնքին առջև միակ ու քաջարցակ պատասխանատուն է:

Դատ, վերաբերութեամբ ըրած առաջին յայտարարութեան օրէն ի վեր նոյն թերթի խմբագիրները Գամիւր Արշալուի եւ Շաւարշ՝ վեհաճառ մարդու հովիւ առած, կեղծաբարութեամբ թմբփուկէ ձայնով կը յայտարարէին թէ Պ. Թահմիզեանը բոլորովին անմեղ մ'է՛ն անգլիականից իրենց զըրպարտութեանը և մեծագոյն պոռնիքներով կը ծանուցանէին թէ ինծի դէմ եղած ամբաստանութեան պատասխանատու հեղինակը իրենք են և աւելն գնով պատրաստ են դատարանին յանձնուիլ եւ ինքնակամ յօժարութեամբ դատաստանի ենթարկուիլ: Այս կանչուած տուքներուն հաւատարմութեամբ արձագանքն եղած են մինչեւ վերջին օրերս Հրանդներ, Մանուէլեաններ, Վարդաներ և «սոսկալի» ու ծեծուած Գալուստներ:

Ես սակայն սկիզբէն ի վեր տարակոյս չունէի թէ այդ երկու խմբագիրները երբէք չը պիտի համարձակին գործնականապէս ապացուցանել իրենց այդ յայտարարութեան անկեղծութիւնը: Ներքնապէս համոզուած էի, որ զեղեցիկ բացազանցութիւններով կը

ջանան միմիայն հասարակութիւնը խաբել, այն վստահութեամբ թէ տիրող օրէնքը երբէք չը ճանչնար զիրենք իրեւ յանցաւոր: Վասն զի ոեւէ թերթի հրատարակութեանց պատասխանատու է միայն եւ միայն լրագրին պատասխանատուն (օթկօօտնիք):

Գործին իրազէկ եղող մարդոց համոզումը այն էր որ արգարեւ Պ. Թահմիզեանը պարզապէս զո՛ն մ'է Շարժումի խմբագիրներուն օրինազանցութեան ու չարամտութեան, եւ դեռ չատեր կենթադրէին, որ այդ պարոններուն մօտ ազնուութեան եւ վեհաճառութեան ստուեր մը մնացած է, ուստի բնականաբար չը պիտի հաւանին որ իրենց յանցանքը Թահմիզեանի նման անմեղ մը քաւէ:

Կը կարծուէր թէ Գամիւր-Արշալուի եւ Շաւարշ մարդկային ամենատարական պարտականութիւն մը կատարած ըլլալու ինքնարիւ ցանկութեամբ իրենց վրայ պիտի առնեն ամեն պատասխանատուութիւն եւ պիտի համարձակին ինծի հետ ճակատ առ ճակատ դատարան ներկայանալ, եթէ միջոց մը գտնուի Թահմիզեանին տեղն իրենք անցնելու դատարանին մէջ: Նոյն միամիտ հաւատքը ունէր նաեւ Տ. Թօփալեան՝ Տ. Թահմիզեանի այդ աշխատակից բարեկամը, որ քանի մը օրեր առաջ ինծի գիմելով խնդրեց որպէս զի Թահմիզեանի օձիքը թողում եւ դատավարութեան սկսիմ Շարժումի խմբագիրներուն դէմ:

Այս առաջարկութիւնը ինծի համար աւելի նպաստաւոր էր, քան որում ինծի դէմ եղած պիտի ունենայի երկու մարդիկ, որոնք յանգցուած ինչեցան յայտարարելու թէ իրենց արիւնք մէջ ունին իմ դաւաճանութիւնս ապացուցանող ամեն միջոց: Հետեւաբար վարկեան մը անգամ չը վարանեցայ Տ. Թօփալեանի առաջարկը ընդունելու, պայմանաւ սր այդ երկու զրպարտիչներ քաջութիւն ունենան իրենց գրածը առանձին թուղթով մը խոստովանելու (*):

Պէտք չէ մոռնալ, որ ցորչափ Շարժումի անուան տալի աղերսագրին մէջ, դատարանը Թահմիզեանէն դատ ուրիշ ամբաստանեալ չէր ճանչնար. ուստի

(*) Շահ առաջ եղան բանը եղած է նաեւ Տ. Թահմիզեանի միջոցաւ, ինչպիսիս պատահեալ եւ «Տարաւ»-ի մէջ:

ՍԱՐԿԱՒԱԳ

(10)

Ամբողջ կանոնադրութիւնը կաղմուած էր երկու մասից — ընդհանուր ծրարագրից եւ մասնաւոր յօդուածներից կամ բուն կանոնադրութիւնից: Ծրագիրը պարունակում է հետեւեալ 10 կէտերը:

1. Բուլղարիայի յեղափոխական կեդրոնական յանձնաժողովի նպատակն է բարոյական յեղափոխութեամբ եւ զինեալ ապստամբութեամբ ազատել Բուլղարիան թէ ի՞նչ տեսակ կառավարութեան ձեւ պէտք է ունենայ ապագայ Բուլղարիան՝ այդ կ'որոշուի միայն այն ժամանակ, երբ մենք արդէն հասած կը լինինք մեր ցանկալի ազատութեան:

2. Այդ նպատակին հասնելու համար թոյլ է տրուում ամեն մի միջոց՝ եւ քարոզչութիւն, եւ գրութիւն, եւ զէնք, եւ հո՛ւր, եւ մահ, եւ սպանութիւն, եւ այլն եւ այլն:

3. Մենք, բուլղարներս, ցանկանում ենք խաղաղութեամբ եւ բարեկամութեամբ ապրիլ մեր բոլոր հարեւանները, մանաւանդ սերերի եւ գա-

րադաղցիներին հետ, որոնք համակրում են մեր նպատակին, նայապէս եւ ուսմէններին հետ, որոնց հետ սերտ կերպով կ'ապրած է մեր վիճակը, եւ ձգտում ենք նոցա հետ միասին կազմել մի ազատ դաշնակցութիւն:

4. Մենք ցանկանում ենք որ բուլղարներին ապրած հողը կառավարուի թաղապետի, այսինքն բուլղարների սովորութիւնների, աւանդութիւնների եւ բնաւորութեան համաձայն. իսկ այն տեղերը, որոնք բռնուած են ուսմէններով, սերբերով, դարադաղցիներով եւ յոյներով, պէտք է կառավարուին այդ ազգերի բնաւորութեան յատուկ եղանակով:

5. Ամեն մի ազգութիւն թող պաշտպանէ իւր ազատութիւնը եւ կառավարուի իւր կամքի համաձայն, — մենք ամենեւին չենք ցանկանում ձեռք բարձրացնել օտարի ունեցածի վերայ, այսինքն այն բանի վերայ, որը մեզ չէ պատկանում: Եւ օր պատճառով չենք էլ ցանկանում որ օտարը ձեռք բարձրացնէ մեր ունեցածի վերայ եւ օտանկուի անէ մեր իրաւունքները:

6. Այն տեղերում որտեղ մի քանի ազգութիւններ ապրում են միասին, մենք թողնում ենք որ նոցանից ա-

մեն մէկը ինքը որոշէ թէ որ կառավարութեան հետ ցանկանում է միանալ — բուլղարական, ուսմանական, սերբական թէ յունական:

7. Մեզ համար մենք ցանկանում ենք միմիայն ազգային ազատութիւն, ազատութիւն կամքի եւ խղճմանքի, — մի խօսքով մարդկային ազատութիւն. միեւնոյն ազատութիւնը ցանկանում ենք նաեւ մեր հարեւաններին: Մենք միտք չունինք տիրապետել ուրիշների վերայ եւ հէնց այդ պատճառով չենք ուզում որ ուրիշներն էլ մեր վերայ տիրապետեն:

8. Մեր հակառակորդների եւ թշնամիների թուում մենք համարում ենք նաեւ այն բուլղարներից վիժուածներին եւ չորրաջիւներին, որոնք արգելք են լինում մեր ազգային գործին եւ այդպիսիներին ամեն տեղ եւ ամեն ժամանակ պէտք է հալածենք:

9. Մենք մեզ բարեկամ եւ դաշնակից ենք համարում մինչեւ անգամ յոյներին, եթէ նոքա կը հրաժարուին իրենց համայնական նպատակներից եւ զանազան պատմական թեկնածութիւններից:

10. Մենք ապստամբում ենք ո՛չ թէ թիւրք ժողովրդի, այլ թիւրք կառա-

վարութեան դէմ եւ այն անձնաւորութիւնների դէմ, որոնք պաշտպանում են այդ կառավարութիւնը... Ընդհանրապէս մենք մեզ բարեկամ ենք համարում բոլոր այնպիսիներին, որոնք համակրում են մեր սրբազան եւ արդար գործին, ի՛նչ ազգից եւ կրօնից էլ որ լինին այդպիսիները:

Ծրագրի այդ կէտերից ընթերցող տեսնում է թէ ինչքան ընդարձակ եւ ազնիւ կերպով են ըմբռնում բուլղար յեղափոխականները ազատութեան գաղափարը:

Այդ ծրագրից յետոյ գալիս են կանոնադրութեան այն գլուխները եւ յօդուածները, որոնք որոշում են կեդրոնական եւ տեղական յանձնաժողովների ներքին կազմակերպութիւնը, նոցա իրաւունքները, պարտաւորութիւնները, պաշտօնների ընտրութիւնը եւ նոր անդամների ընդունելութեան եղանակը, յեղափոխական նպատակին հասնելու միջոցները, պատիժները եւ այլն եւ այլն: Կեդրոնական յանձնաժողովին վերապահուում են առ ժամանակեայ կառավարութեան բոլոր իրաւունքները:

Իբրեւ լիակ միջոց Թահմիզեանին, օձիքը ձգելու պահանջեցի Տ. Թօփալեանէն, որ Շարժումի անանուն խումբագիրներուն իսկական ստորագրութեամբը ինծի ուղղուած թուղթ մը բերէ, որուն մէջ յայտարարեն թէ ես դաւաճան, կամ մասնիկ եղած եմ կեանքիս օրերէն մէկուն մէջ եւ իմ գրածներս ալ՝ ազգադաւ։

Տ. Թօփալեան շատ արդար, շատ բանաւոր դատ այս պահանջումս եւ վստահարար յայտնեց թէ ինքը՝ կարող է այդպիսի թուղթ մը առնել Շարժումի խմբագիրներէն, ուստի մեկնեցաւ բանակցելու համար անոնց հետ։

Լսէ՛ ժողովուրդ,

Երկու օր, երեք օր շարունակ աշխատեցէ յետոյ ինքը՝ Տ. Թօփալեան արդար զայրոյթով լեցուած կուգայ կը յայտարարէ ինծի թէ խոստանալէ յետոյ խոյ կուտան այդ թուղթը ստույգաբար եւ հետեւաբար ինքզինքնին դատի ենթարկելու անհաճոյ հարկէն։

Եղելով ինչը ծանօթ է նաեւ իրաւունքի խմբագրապետին եւ ուրիշ շատերու ալ, ուստի աւելորդ կը համարիմ ծանրանալ Տ. Թօփալեանի բանակցութեան մանրամասնութեանց վերայ, որ այնքան չի կենցուցիլ է Շարժումի անճրկած խմբագիր— դերակատարներուն համար։

Հայ ժողովուրդ, իբր եզրակացութիւն վերջին խօսք մ'ալ, Իրենց այս ընթացքով Շարժումի խմբագիրները ցոյց տուին թէ կը դողան ինծի հետ ասպարէզ իջնալու եւ ինչ որ ահուկի է, անխղճութիւն ունեցան յօժարելու, որ իրենց գործած անորակելի յանցանքին համար պատիժ կրէ այնպիսի մէկը, որ իրենց իսկ բառով բացարձակ անվերջ մ'է։

Հայ ժողովուրդ, ահա ախպար աշխուժեան գործ մը որուն պարզ եւ ճշգրիտ պատմութիւնը քեզ ներկայելու դժբաղդութիւնը կուենանաւ այսօր՝ քեզ անաչառ դատաստանիդ զիմելու համար։

Տ. ԺԳՆԱՒՈՐԱՆՆ

Խառն Ժողովի մը որոշումով բաղադրեալ Աղբ վարժարանին աղկանց ձեռագործները կառավարական արտօնութեամբ վիճակահանութեան պիտի դրուին։

Տոմսակներէն մաս մը արդէն Պուլկարիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ բնակող նշանաւոր աղագայնոց խրկուած ու սիրայօժար ընդունուած ըլլալուն համար, ներկայիս պարտք կը համարինք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել հրապարակաւ։

Վիճակահանութիւնը տեղի ունենալէ յետոյ դարձեալ լրագիրներու միջոցաւ արդիւնքը մանրամասնօրէն պիտի հաղորդենք։

Ի դիմաց Հոգաբարձութեան

Ս. Ն. Գաբրիէլեան

1898 Յունիս 8/20, Տօպրիչ

ԼՐԱՔԱՂ

Կ. Պօլսոյ Խառն Ժողովը նկատողութեան առնելով Իգմիւրի Ընդհ. Ժողովին տեղին առաջնորդ Տ. Ներսէս Կ. Ասլանեանի դէմ զրկած տեղեկագիրը, որուն մասին տեղեկութիւն տրուած ենք մեր նախընթաց թիւերէն էկուն մէջ, որոշում մը տալէ տոտջ

հարկ տեսեր է քանի մը բացատրութիւն պահանջել Իգմիւրի Ընդհ. Ժողովին եւ Առաջնորդէն միանգամայն։

—Քաղաքական ժողովոյ առաջարկութեամբ Խառն Ժողովն սկզբունքով ընդունել է Պուլկարիոյ համար հոգեւոր հովիւ մը կարգելու պէտքը եւ Պատրիարքին յանձնել է արժանաւոր եկեղեցական մը սահմանել եւ առաջարկել վարչութեան։

—Պատրիարքարանի քարտուղարներէն մէկը Պայպէ Հառապի մէջ Ս. Պատրիարքին կողմէ տեսակցութիւն մը ունեցեր է Մր. Հէրթի հետ՝ Ուրֆայի եւ ուրիշ տեղերու սրբերուն ազդ. եւ կեղեցիին դաւանութեան համաձայն հաղորդութիւն տրուելու եւ իրենց ուրիշ հոգեւոր պէտքերու մատակարարութեան հոգ ատրուելու պէտքին վերայ, յիշեցնելով գաւառներէն եկած զանգարանները միաբնակներուն այս մասին բռնած ընթացքին դէմ։ Մ. Հերթի պատասխաններ է իրենք համամիտ չին այդ ընթացքին եւ խոստացել է զըրբի Միաբնակներուն որպէս զի ջանան որբերը խնամել այն եղանակաւ որ զանգարանի տեղի չի տայ։

—Ազգային մը Բիզանդիոնի մէջ կառավարելէ հանդանակութիւն մը բանալ, անոր արդիւնքով գործադրել բարիչապաճ Տիգրան Գարակէօզեանի կտակը, եւ պատշաճ արձանագրութեամբ մը պաշտօնապէս նշանակել Գարակէօզեան ընտանիքին կտակը գործադրած չըլլալը։ Գրեթէ կատակի մը երեւոյթն ունեցող այս առաջարկը հաճելի թուել է ոմանց, որոնք այժմէն պատրաստակալութիւն կը յայտնեն այս օրինակ հանդանակութեան մը մասնակցելու, որպէս զի Գարակէօզեանց ազգին ունեցած պարտքը ազգովին վճարուի, քանի որ իրենք վայն վճարել չեն ուզեր։

—Սարա Պլաք անուն հրէուհին, որ կը փութաքի հայ եկեղեցւոյ ծոցը ընդունուի, անգրգուռի կը մնայ իր որոշումին վրայ, հակառակ իր ծնողաց ջանքերուն, որոնք կուզեն տարհանուի իրենց ազգիլը։

—Կարինը եւ Մուշի մէջ ալ կարգ մը հայ բանտարկեալներ ազատ արձակուել են։

—Կեղորտական վարժարանի խնամակալութիւնը արտակարգ նիստի մը մէջ որոշել է անձամբ ներկայ գտնուիլ վարժարանին տարեկան քննութիւններուն, եւ ասոնց արդիւնքին համեմատ նկատողութեան առնել այն խնդիրը թէ կարժէ՞ Գրգ. դասարանն ալ վերաբանալ յառաջիկայ տարին։

—Շիշլիի (Կ. Պօլսոյ) ազգ. դերեզմանատան գործերը պիտի տնօրէնուին այսուհետեւ եօթն անդամներէ բաղկացեալ յանձնաժողովի մը ձեռքով։

—Նիւ-Եօքքի Հայուհիներու խնամակալութիւնը, որուն նպատակն է որբեր եւ որբուհիներ որդեգրել ու պահել ազգ. որբանոցներէն մէկին մէջ, առայժմ վեց որբի համար՝ իբր տարեկան ծախք, 30 անգ. ոսկի զրկել է Ս. Պատրիարքին։

—Կովկասի աղջկանց ձեռնարանի չըրջանը այս տարի աւարտել են 25 աշակերտուհի, որոնց մէջ առաջին հանգիստցի է հայ աղջիկ մը, Օր. Մարիամ Ծանաղարեան։

—Թիֆլիսի հայ մամուլին ներկայացուցիչները մատուցել են խաչատուր Արուստիանի մահուան յիշատակին առթիւ հանդիսաւոր հոգեհանգիստ մը կատարել ստալ եւ գրական երկերով մը կազմակերպել տաղանդաւոր հեղինակին յիշատակը պատուելու համար։

—Թիֆլիսիցի մատուցել են նոյնպէս վայելուչ չքով ամենա ազգ. ծերունի վիպասան Պերճ Պօռլուսիցի գրական

գործունէութեան քառասունամակը որ կը լրանայ յառաջիկայ ապրիլին։

—Գուրեթի Լիլաւա թաղի Հայուն հաց բարեգործական ընկերութիւնը լսելով որ Խոյի մօտ երկու հայ գիւղերու բնակիչներուն մէջ մասը՝ մասամբ անօթութեան եւ մասամբ պարսիկ դատաւորին ճնշումներուն պատճառով՝ մահաւանդութիւնը ընդունած է, կորույն մնացած գիւղացիներուն հաց ու դրամ բաշխելու համար երկու պաշտօնեայ զրկել խոյ։

ՀԱՐՍԱՅՈՒ ԱՂՋԻԿ ԿԸ ՓՆՏՈՒՄ

Բիզանդիոնի մէջ կը կարգանք. Ո՞ր ունի հաւանցոյ աղբիլ. — քո՞ղ կարդայ. Համով հոտով լուր մը կուգայ Միացեալ Նահանգներէն։ Հոն զաղթած հայերուն աւելնքն ալ օտարաւոր, օտարամոլ չեն։ Կը փափաքեն մնալ հայու զաւակ, Հայ եկեղեցւոյ զաւակ, եւ իբրեւ է՞ն ապահով միջոց իրենց ինքնութիւնը պահելու եւ իրենց սերունդը փրկելու, կը փափաքեն հայուհիներու հետ ամուսնանալ։ Վարձկան սէրէն ալ չեն ակործար որ իրենց ժամանակն անցնեն անկանոն կենցաղներու մէջ. Օրինաւորապէս ամուսնանալ, Հայ եկեղեցւոյ պսակով ամուսնանալ եւ հայուհիներու հետ ամուսնանալն է իրենց բաղձանքը։ Հետեւապէս Ֆրէզնոյէ, Քալիֆօրնիոյ այն հեռաւոր անկիւնէն կը գրեն յԱղբ. Պատրիարքարան թէ առ այժմ առնուազն յիսուն հայ աղջիկներու ինքրանք կայ հոն, եւ յառաջիկային աւելի պիտի խնդրուի։ Հարանցու այս համակրելի էակներու ընդհանուր հայթայթիչն համարել են Աղբ. Պատրիարքարանն՝ այն ենթագրութեամբ թէ տրամադրելի սրբուհիներ կրնան գլուխ տալ հոն եւ հոն, Պատրիարքարանի ուղղակի հսկողութեան ներքեւ, ու կըսեն թէ այն որբուհիներն ամենէն ընտրելի հարսնացուները կրնան ըլլալ։ — Ս. Պատրիարք Հայրը պատասխանել է թէ ազգային նորահաստատ Որբանոցներու մէջ պատասպարուած որբուհիք տակաւին չափահաս չեն, եւ արդէն այդպիսի հայթայթութեան տեսլի անձնական միջոցներով կըրնան կատարուիլ քան պաշտօնաւորանի մը ձեռամբ։ Պակաս չեն ամեն դասէ հայուհիներ որք յօժարին երթալ կարգուելու։ Բայց նախ պէտք է գիտնալ կարգուիլ ինքրողներուն անունները, վիճակն, ինչ պայմանի եւ տարիքի տէր անձինք ըլլալն, եւն. ու աղջիկ տուող չի պակսիր։ Ըստ մեզ, Ս. Պատրիարք Հայրն աղէկ կընէր եթէ գործը բահանաներուն յանձնէր։ Անոնք այնքան ճարպիկ են այս տեսակ ուրախաբեր գործերու մէջ, իրենց ընդարձակ ծանօթութիւններով, ամեն տուն եւ լեւմուտով, եւ բաւական է որ ուրիշ կերպով դժուարութիւն մը չըլլայ, դիւրաւ կրնան գտնել հարաւրջում համար Ամերիկայ երթալու յօժարող 50 կամ 100 աղջիկ։

«ԻՐԱՆԻՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մ. Ա. Կ. Սիլիստի. Այն պատասխանը որ մեր 30րդ. թիւին մէջ ուղղուած է Ա. Ի. ձեզի չի վերաբերիր։

Ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրուի Բաղէշի հարաւ. տեղեկան կողմի երկու գիւղերէն եկած աղբիւսոյ յորեւուն վրայ, զոր հրահարակած ենք 4րդ. երեսին մեջ։

ԱՐՆԱՌՏԼԱՐ

Իւշ հաֆթա մուգատեւս պուստիւնը տաւ եղբայր օլտըղը մը թարգմէթ պու կիւն հաղգաթ ընկել քէսպ իթմիշ տիր։ Պու կիւն Ալպանիա (Արնաուտլըգ) խըրըթիյանլարը՝ էրմէնիէր կիպի տօղրուտան տօղրու իսլամլարըն թաաուպընա գուրպան օլմագտաւ տըրլար։ 8—10 կիւնտէն պէրու վիբուտ իտէն թէլէկրաֆլար Ալպանիատան վէ Գարատաղ սինօրլարընտան բէք վախիմ վէ տէհ. չէթի իսպէրլէր կէթիբիյօր, իսլամ Արնաուտլար՝ սօն սէնէլէրտէ թիւրք հիւքիւմէթիւնտէն ալտըղլարը սիւսլարը իլէ պիւթիւն Պէրան գաղապըն խարապ իտուպ, պիր չօգ խըրըթիյանլարը (էրբէկ, գարը վէ չօճուգ) գաթլ ու թէլէթ իթմիշէր տիր։

Պու վահշիլիքէրէ գարը ըՍթանպօլ Գարատաղ աճէնթի վէ Բուսիա էլիսի Երլարըն վէ Պապը Ալինին նաղարը տըղգաթընը տալէթ իթմիշ օլմալարընտան, Սթանպօլ աղթօրլէրի՝ կէօհա հիշ պիր իշտէն իսպէրլէրի եօգ կիպի պիր թէաճուպ վէ պիր թէլաշ կէօսթէրմէքտէ տիրլէր։ Տահա պիր այ էլվէլ մէզքիւր Արնաուտլ րէյիսլէրինի Սուլթան հուգուրընա գապուլ իտուպ՝ նասա հաթ եօլլու «սիգ իսլամ պուլուն տըլընըղտան պիր պիրինիլէ գարտաշաընը, եէքտիկէրինիլէ միւթթէֆիգ պուլընընը» վէ սայիրէ. տէյուպ տէ անլէրի նիշանլար վէ պախշիլէր իլէ վաթանլարընա եօլլամաընըն սէմէրէսի նէ օլաճաղընը պիգ էլվէլտէն պէյան իթմիշ իտիք իսէտէ, Արնաուտլարըն պու գատար աճէլէ իլէ թէլէպպիւս իտէճէլէրինի գանն իթմէլ իտիք։

Թիւրք հէօքիւմէթիւնի 2—3 սէնէտէն պէրու Արնաուտլարլէ պէսլէտիկի բօլլիթիգա մինէլ էվվէլ տըղգաթըն նաղարտան կէլիւրմէքտէ օլտըղընըղտան, իքի սէնէտէն պէրու չօգ տէֆալար տէլմիշիքի, էրմէնիսթանտա էրմէնիլէրէ գարըն Գիւրալէրէ իճրա իթտիբիկի բօլլըն թըպգըսընը պու գըլթատա Արնաուտլարա իճրա իթտիբիք իլիւն թէրթիպաթ ու թէլիկաթտա պուլընըյօր։

Արնաուտլարըն հիւճուլընտան մուհաֆազա օլընմագ իլիւն, Չար հաղրէթլէրի 2—3 տէֆա օթուգար պին թիւֆէնկ Գարատաղ հիւքիւմէթիւնէ իհտա իթմիշ իտի. Շիմ տի տախի Սթանպօլ բուս սէֆիւրի տիրլօմասիէ ուսուլը իլէ Գարատաղ աճէնթիւնի բօթթէթիւնէ գուլվէթ վէրմէքտէ տիր. Երլարըն իսէ՝ սուրէթա տապիշին մու.

Печатница „В зимноль“ — Варна